ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 5

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

28 փետրվարի 2022թ.

Նախագահ Մ.Ա.Զաքարյան

Քարտուղար Ք.Վ.Օթարյան

Ներկա էին խորհրդի 12 անդամներից 9 անդամները:

Նիստի օրակարգը ներկայացրեց Մ. Զաքարյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2021-2022 ուս. տարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի ամփոփում:

/զեկ. Մ.Ա.Զաքրյան/

2. Դասալսումների կազմակերպման գրաֆիկների հաստատում:
3. Մոնիթորինգի աշխատանքային խմբի կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն:
4. Հաղորդում ամբիոններում 2-րդ կիսամյակի դասընթացների փաթեթների վիճակի առկայության և վերանայման ընթացքի մասին:
5. Ընթացիկ հարցեր/ Ք.Օթարյանին ներկայացնել ամբիոնի ասիստենտի կոչման:

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց ֆակուլտետի դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Մ.Ա.Զաքարյան:

Առցանաց քվեարկությամբ՝ 9 կողմ 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց

Որոշում՝5/1

- Հաստատել նիստի օրակարգը:

Օրակարգի առաջին հարցի՝ « 2021 - 2022 ուս. տարվա 1-ին կիսամյակի քննա շրջանի ամփոփում» , վերաբերյալ Մ.Զաքարարյանի հաղորդումը հետևյալն էր.

1-ին կիսամյակի քննա շրջանի ավարտից հետո ունենք երկու ուսանողներ՝

- ✓ ԻԿՄ երրորդ կուրսիուսանող Վոլոդյա Արթուրի ներկարարյանը,
- ✓ ԻԿՄ երկրորդ կուրսի ուսանող Վազգեն Ֆարիկի Ղարայանը,

2021-22ուս.տարվա առաջին կիսամյակի արդյունքով անհրաժեշտ գումարային կրեդիտներ չհավաքելու և կիսամյակի ուսման վարձը չվճարելու պատճառով հեռացվել են համալսարանից:

Մաթ.մոդելավորում և թվային մեթոդներ առարկայից կրեդի պարտքեր ունեն երեք ուսանողներ:

Բաց քվեարկությամբ՝ 9 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվել է.

ՈՐՈՇՈՒՄ 5/2

Ընդունել ի գիտություն:

Օրակարգի երկրորդ հարցի՝ « Դասալսումների կազմակերպման գրաֆիկների հաստատում», վերաբերյալ Մ.Զաքարյանի հաղորդումը հետևյալն էր.

Դասալսումների կազմակերպման գրաֆիկները կազմված են այնպես, որ բոլոր դասախոսները իրենց ազատ ժամերին փոխադարձ դասալսումներ անցկացնեն: Ամբիոնի վարիչները կանցկացնեն ամբիոնների բոլոր առարկաների դասերի դասալսումներ :

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Գ.Սիմոնյանը ասաց, որ փոխադարձ դասալումները շատ կարևորեն հատկապես երիտասարդ դասախոսների համար, որոնք նոր են դասավանդման փորձ ձեռք բերում: Նշեց, որ Էդիտա Պողոսյանին վստահել են հեռակա ուսուցման բաժնի էկոլոգիա առարկայի դասերը, փոխադարձ դասալսումները կնպաստեն, որպեսզի Էդիտան ձեռք բերի դասավանդման հմտություններ:

ԲԱՑ բաց քվեարկությամբ՝ 9 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվել է.

ՈՐՈՇՈՒՄ 5/3

Հաստատել Դասալսումների կազմակերպման գրաֆիկները:

Օրակարգի երրորդ հարցի **՝« մոնիթորինգի աշխատանքային խմբի կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն»** ,վերաբերյալ «Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների» ամբիոնի վարիչ, մոնիթորինգի աշխատանքային խմբի ղեկավար Ա.Հովակիմյանը ներկայացրեց մոնիթորինգի աշխատանքային խմբի կատարած աշխատանքները։

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- մոնիթորինգի աշխատանքային խմբի անդամներ Գ.Սիմոնյան, Ա.Մարգարյանը, Մ.Ճաղարյանը, Ք.Օթարյանը ներկայացրեցին իրենց կատարած աշխատանքները և եզրահանգումները։ «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագրի մոնիթորինգի խումբը՝ ամփոփելով արդյունքները, ներկայացրեց ներքոհիշյալ եզրակացությունը.

- վերջին տարիներին ծրագրի դիմորդների թիվն ավելանում է, բարձրացել է մրցութային ցուցանիշը և մրցութային շեմը հաղթահարող դիմորդների մասնաբաժինը,

- ծրագրի ուսանողները հետաքրքրված են ծրագրում ներառված դասընթացներով, ընդ որում նախապատվություն են տալիս ծրագրավորման հետ առնչություն ունեցող դասընթացներին, գտնում եմ, որ դրանք օգտակար են և ստացած գիտելիքները և ձեռք բերած մասնագիտական կարողությունները հաջողությամբ կիրառել են պրակտիկաների ժամանակ,

- դասախոսները փաստում են մասնագիտության շրջանակներում առավել խորքային խնդիրներ ուսումնասիրելու և համակարգչային գիտության արդի նվաճումներին տեղեկացված լինելու ուսանողների ձգտման և մեծ ցանկության մասին,

- ուսանողները նկատելիորեն ակտիվ աշխատում են միկրոսխեմաների և սարքերի ծրագրավորման նորաբաց լաբորատորիայում և արդեն գրանցել են առաջին հաջողությունները՝ իրենց նախագծով հաղթելով դրամաշնորհային ծրագրում,

- ծրագրի վերջին տարիների շրջանավարտները նշում են, որ բավարարված են մասնաճյուղում ստացած կրթությունից, որ նրանց 80 տոկոսը լիարժեք ձեռք է բերել կրթական ծրագրում ամրագրված մասնագիտական կարողությունները և հմտությունները,

- ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահները նշում են, որ ուսանողների ավարտական աշխատանքներում առկա են յուրօրինակ լուծումներ, նորարարական տարրեր, հաջողված ծրագրային լուծումներ,

- մարզի գործատուներն ընդհանուր առմամբ բավարարված են ծրագրի շրջանավարտներից, մարզի բոլոր ծրագրավորման ընկերություններում աշխատում են ծրագրի շրջանավարտները և ուսանողները:

Բաց քվեարկությամբ՝ 9 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվց

ՈՐՈՇՈՒՄ 5.4

ՈՐՈՇԵՑԻՆ- «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագիրը տարածաշրջանում համարել պահանջված, այն պարբերաբար վերանայել և կատարել իր առջև դրված խնդիրները:

«Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագրի հետագա իրականացումը ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում համարել արդարացված և նպատակահարմար:

Մոնիթորինգի աշխատանքային խմբի կատարած աշխատանքները գնահատել բավարար և հաշվետվությունը ԵՊՀ ԻՄ ԿԲԴՎ բաժի ներկայացնելու համար տրամադրել բնական գիտությունների ֆակուլտետի դեկան Մ.Զաքարյանին :

Օրակարգի չորրորդ հարցի՝ «Հաղորդում ամբիոններում 2-րդ կիսամյակի դասընթացների փաթեթների վիճակի առկայության և վերանայման ընթացքի մասին:», վերաբերյալ «Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների» ամբիոնի վարիչ Ա.Հովակիմյանը ներկայացրեց,որ ամբիոնում առկա են բոլոր առարկաների պորտֆոլիոները կամ ծրագրերը: Դասախոսներին հանձնարարված է պարբերաբար վերանայել և թարմացնել պորտֆոլիոները:

Բաց քվեարկությամբ՝ 9 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվց

ՈՐՈՇՈՒՄ 5/5

Ընդունել ի գիտություն:

Օրակարգի հինգերորդ հարցի՝ «Ք.Օթարյանին ներկայացնել ամբիոնի ասիստենտի կոչման:» ,վերաբերյալ «Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների» ամբիոնի վարիչ Ա.Հովակիմյանը ներկայացումը հետևյալն էր.

Ք.Օթարյանը ԵՊՀ ԻՄ-ում աշխատում է հիմնադրման օրվանից, երկարամյա տարիների ընթացքում ինքնակատարելագործվել է, անցել է մասնագիտական վերապատրաստումներ, հեղինակ է ուսումնամեթոդական ձեռնարկի և հոդվածների, ունի մասնակցություն գիտաժողովների: Ակտիվորեն մասնակցում է ամբիոնի մեթոդական և կազմակերպչական աշխատանքներին:

Կից ներկայացվում է գիտական և մեթոդական աշխատանքների ցուցակը և մասնագիտական վերապատրաստումների վկայականների պատճենները:

Մ.Զաքարյանը ներկայացրեց, որ Ք.Օթարյանը ունի 30 տարվա դասավանդման փորձ, ղեկավարել է կուրսային և ղեկավարում է ավարտական աշխատանքներ: Դասավանդել է ներքոհիշյալ առարկաները.

Բնագիտական գիտությունների ֆակուլտետում.

1. ԷՀՄ և ծրագրավորում
2. ԷՀՄ ճարտարապետություն և ասեմբլեր լեզու
3. Օպերացիոն համակարգեր
4. Թվային մեթոդներ և մաթ. մոդելավորում
5. Համակարգիչների ֆիզիկական տեսության ներածություն
6. Օպտիմիզացիայի մեթոդներ

Տնտեսագիտական ֆակուլտետում

7. Համակարգչային պրակտիկում
8. Տնտեսագիտական ինֆորմատիկա
9. Համակարգչից օգտվելու հմտություններ

Հումանիտար գիտությունների ֆակուլտետում

10. Համակարգչից օգտվելու հմտություններ

11. Կիրառական վիչակագրություն և տվյալների հետ աշխատանք

Դրական արտահայտվեցին Գ.Սարգսյանը, Գ.Սիմոնյանը:

Բաց քվեարկությամբ՝ 9 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվց

ՈՐՈՇՈՒՄ 5.6

ՈՐՈՇԵՑԻՆ- Երաշխավորել Ք.Վ.Օթարյանին «Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների» ամբիոնի ասիստենտի պաշտոնում ընրվելու համար :

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Մ.Ա. ԶԱՔԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ_____Ք.Վ.ՕԹԱՐՅԱՆ